

ՀՀ Վարչական դատարանին

Հայցվոր՝  
Լեւոն Ալբերտի Բարսեղյան,  
ՀՀ, Գյումրի քաղաք, Ղանդիլյան փ., շ. 27բ, բն.16  
Անձնագիր AK 0373234, տրված 18.09.2009-ին, 001-ից  
Սոցիալական քարտ 2801670294

Պատասխանող՝  
ՀՀ Շիրակի մարզպետ Լիդա Նանյան  
ՀՀ, Գյումրի, Գ.Նժդեհի փ. 16

## Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

(տեղեկատվությունը տրամադրել պարտադրելու պահանջի մասին)

Ես ՀՀ քաղաքացի եմ, մի քանի հասարակական կազմակերպությունների հիմնադիր, ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպության խորհրդի նախագահը եւ ակումբի [www.asparez.am](http://www.asparez.am) էլեկտրոնային կայքի ու թերթային տպագիր հրատարակությունների խմբագիրն եմ:

2010 թվի հունվարի 18-ին տեղեկատվության թիվ 1/2010 գրավոր հարցմամբ դիմել եմ ՀՀ Շիրակի մարզպետին, խնդրելով ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Շիրակի մարզպետարանը ի՞նչ նպատակներով է ծախսել «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով՝ մարզպետարաններին 2005, 2006, 2007, 2008 եւ 2009 թվականներին հատկացված գումարները, ամեն տարի քանի՞ որոշում է կայացվել, ինչքա՞ն գումար է ծախսվել յուրաքանչյուր որոշմամբ:

2. Շիրակի մարզպետարանը 2005, 2006, 2007, 2008 եւ 2009 թվականներին ի՞նչ նպատակներով է ծախսել «Ներկայացուցչական ծախսեր» կատարելու նպատակով նախատեսված գումարները, ամեն տարի քանի՞ որոշում է կայացվել, ինչքա՞ն գումար է ծախսվել յուրաքանչյուր որոշմամբ, ի՞նչ ծառայություն կամ ապրանք է գնվել այդ ծախսերով, ի՞նչ մատակարարներից են գնվել դրանք:

2010 թվի հունվարի 18-ին պատվիրված նամակով հարցումն ուղարկվել է ՀՀ Շիրակի մարզպետին, ըստ ետ ստացված փոստային ծանուցագրի, հարցումը մուտքագրվել է ՀՀ Շիրակի մարզպետարան 2010 թվի հունվարի 20-ին:

2010 թվի հունվարի 27-ին ստացել եմ հունվարի 26-ով թվագրված 01/120-10 գրությամբ պատասխանը: Պատասխանում ասվում է, որ «յուրաքանչյուր տարի մարզի բնակիչ համարվող կարիքավոր անձանց դիմումներով եւ համապատասխան ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա հատկացվել է ֆինանսական օգնություն», այդ թվում՝ 2008-եւ 2009 թվականներին 20-ական միլիոն դրամ, որոնք բաշխվել են մարզպետի՝ համապատասխանաբար թվով 25 եւ 18 որոշումներով, իսկ 2005, 2006, 2007 թվականներին՝ 10-ական միլիոն դրամ, մարզպետի՝ համապատասխանաբար՝ թվով 15, 15 եւ 20 որոշումներով:

Երկրորդ հարցիս ի պատասխան, Շիրակի մարզպետը տրամադրել է հետեւյալ տեղեկություններն այն մասին, որ «յուրաքանչյուր տարի մարզպետարանի կարիքների համար ձեռք է բերվել ՀՀ պետական բյուջեով հաստատված եւ ՀՀ կառավարության համապատասխան որոշումով ամրագրված գումարների անվանացանկին համապատասխան ապրանքներ (ջրեր, սուրճ, կոնֆետեղեն, թխվածք)»: Պատասխանում բերված են «ներկայացուցչական ծախսեր» հոդվածով նախատեսված գումարները եւ կատարված ծախսերը՝ տարեկան հանրագումարներով: Այսպես. 2005 թվականի համար նախատեսվել է այդ ուղղությամբ ծախսել 100.000 դրամ եւ ծախսվել

Է ամբողջությամբ, իսկ 2006, 2007, 2008, 2009 թվականներին նախատեսվել է տարեկան 300.000 դրամ եւ ամբողջությամբ ծախսվել է:

Ստացված այդ տեղեկությունները ակնհայտորեն փոքր մասն են այն ամենի, ինչ եւ խնդրել էի տրամադրել իմ առաջին հարցմամբ: Ես, իմ որոնած տեղեկությունները ամբողջությամբ ստանալու նպատակով, ստիպված, 2010 թվի հունվարի 29-ին 2/2010 հարցումն եմ հղել Շիրակի մարզպետին: Այդ հարցմամբ ես խնդրել եմ ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով Շիրակի մարզպետարանի կողմից 2005, 2006, 2007, 2008 եւ 2009 թվականներին մարզի բնակիչ համարվող կարիքավոր անձանց դիմումներով եւ համապատասխան ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա որպես ֆինանսական օգնություններ հատկացված գումարները՝ առանձին-առանձին՝ ըստ որոշումների, եւ այդ գումարների հատկացման համար Շիրակի մարզպետի կայացրած բոլոր որոշումների պատճենները:

2. «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով Շիրակի մարզպետարանի՝ 2005, 2006, 2007, 2008 եւ 2009 թվականներին իրականացրած գնումների մանրամասները, մասնավորաբար. մատակարարները՝ ըստ ստացած գումարի եւ մատակարարած ապրանք(ներ)ի, մատակարարների ընտրության եղանակը, վճարումների եւ մատակարարումների ժամկետները:»:

2010 թվի հունվարի 29-ին պատվիրված նամակով 2/2010 հարցումն ուղարկվել է ՀՀ Շիրակի մարզպետին, ըստ ետ ստացված փոստային ծանուցագրի, հարցումը մուտքագրվել է ՀՀ Շիրակի մարզպետարան 2010 թվի փետրվարի 02-ին:

2010 թվի փետրվարի 10-ին ստացել եմ փետրվարի 10-ով թվագրված 03/307-10 պատասխանը: Պատասխանում ասվում է. «1. ՀՀ պետական բյուջեի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից, մարզպետի համապատասխան որոշումներով, քաղաքացիների դիմումների եւ դրանց ուսումնասիրությունների հիման վրա վերջիններս հատկացվել են ֆինանսական օգնություններ: Հարկ է նշել, որ այս հատկացումները տրամադրվել են որպես սոցիալական աջակցություն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց հիմնական պահանջմունքների որոշակի բարելավման նպատակով, եւ այս կապակցությամբ վերոնշյալ գործընթացի, մասնավորապես՝ օգնություն հայցած քաղաքացիների գումարների հատկացման վերաբերյալ որոշումների, դրանցով քաղաքացիներին տրամադրված օգնությունների մանրամասն հրապարակումը դիտարկում ենք որպես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հատկանիշներով բնորոշվող սահմանափակման խախտում: 2.«Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով իրականացված գնումների մանրամասների վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ Շիրակի մարզպետարանի կարիքների համար 2005-2009թթ ձեռք բերված ապրանքների եւ այդ նպատակով ծախսված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը Ձեզ ներկայացվել է Մարզպետի՝ թիվ 26.01.2009թ. թվ 01/120-10 ուղեկից գրությամբ: Լրացուցիչ հայտնում ենք նաեւ, որ մատակարարների ընտրությունը, վճարումների եւ մատակարարումների ժամկետների որոշումը իրականացվել է պետական գնումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Այս պատասխանը, փաստորեն, ինչպեսեւ նախորդը, չի պարունակում իմ հարցրած տեղեկությունները: Շիրակի մարզպետարանը, չնայած իմ երկու հստակ հարցումներին, ըստ եւության չի պատասխանել դրանցից ոչ մեկին, ինձ չեն տրամադրվել տեղեկություններ «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով ֆինանսական օգնություններ հատկացված գումարների մասին՝ առանձին-առանձին, ինձ չի տրամադրվել այդ գումարների հատկացման համար Շիրակի մարզպետի կայացրած որեւէ որոշման պատճեն, ինչպես նաեւ տեղեկություններ «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով Շիրակի մարզպետարանի՝ 2005, 2006, 2007, 2008 եւ 2009 թվականների իրականացրած գնումների մատակարարների մասին՝ ըստ ստացած գումարի եւ մատակարարած ապրանք(ներ)ի, վճարումների եւ մատակարարումների

ժամկետների, մատակարարների ընտրության եղանակի մասին (մրցութային եղանակով ընտրված, թե՛ մեկ անձից գնամաք):

Շիրակի մարզպետարանը, որպես «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով ֆինանսական օգնություններ հատկացման մասին հարցրած տեղեկությունները չտրամադրելու պատճառաբանություն ներկայացնում է այն հանգամանքը, թե, այդ տեղեկությունների հրապարակումը իրենք դիտարկում են որպես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հատկանիշներով բնորոշվող սահմանափակման խախտում: Ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, տեղեկատվություն տնօրինող մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը:

Շիրակի մարզպետարանի՝ տեղեկություններ չտրամադրելու պատճառաբանությունը ապօրինի է, մտացածին, անհեթեթ եւ անհիմն: Պատասխանողը, այդ տեղեկությունները ներկայացնելով որպես ընտանեկան եւ անձնական գաղտնիք պարունակող, որեւէ օրինական ապացույց չի ներկայացրել այն բանի, որ դրանք իսկապես անձնական եւ ընտանեկան գաղտնիքներ են պարունակում: Այս պարագայում պատասխանողը որպես մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիություն, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիություն է որակում մարզպետի կայացրած որոշման հիման վրա պետական բյուջեից ստացված գումարի հետ կապված հանգամանքները: Այդ տրամաբանությամբ անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիության որակ է կրում ֆիզիկական անձի հետ կապված ամեն ինչ, ուրեմնե՝ այդպիսի որակ ունեն քաղաքացիների եւ իշխանությունների բոլոր փոխհարաբերությունները եւ այդ փոխհարաբերությունների արձանագրությունները: Այնինչ, երբ իրենց կարիքները հոգալու համար քաղաքացիները դիմում են իշխանությանը պետական միջոցներից դրամական օգնություն ստանալու խնդրանքով, եւ, երբ իշխանությունը որոշում է կայացնում այդ օգնությունը հատկացնելու մասին, դա չի կարող որակվել որպես անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիություն, որովհետեւ այդ գործընթացները վերաբերվում են հանրային միջոցների օգտագործմանը: Հանրային միջոցների օգտագործման արդյունավետությունը գնահատելու համար հանրությունը տեղեկացված լինելու կարիք ունի: Այս գործով՝ իմ տեղեկացված լինելու իրավունքի այսպիսի սահմանափակումն ինձ եւ որեւէ հետաքրքրված քաղաքացու հնարավորություն չի տալիս գնահատել հանրային միջոցի ծախսման արդյունավետությունը, որոշակի կարծիք կազմել այդ մասին եւ հանրային միջոցների ծախսման կոնկրետ դեպքի մասով՝ որոշում կայացրած մարմնի գործողությունը արդարացված համարել, կամ՝ չհամարել այդպիսին: Այսպիսով, այս տեղեկությունները չտրամադրելու մասին Շիրակի մարզպետարանի դիրքորոշումը ուղղակի հակասում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված՝ տեղեկություններ ստանալու եւ կարծիք ունենալու իմ իրավունքին:

Բացի այդ, պատասխանողի՝ տեղեկությունների տրամադրման մերժման պատճառաբանությունն անհիմն է նաեւ այն իմաստով, որ կարիքավոր քաղաքացիները Շիրակի մարզպետին դրամական օժանդակության համար դիմելիս տեղյակ եղել են, որ այդ միջոցները պետական են՝ պետական բյուջեից, ինչը հարկատուների միջոցներն են, եւ արդեն իշխանությանը դիմելիս՝ իրենք կամա թե ակամա իրենց բացահայտել են որպես բյուջետային միջոցների կարիքն ունեցող եւ հնարավոր նպաստառու: Այսպիսով, «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցների շահառուները նպաստ ստանալու որեւէ փուլում եւ որեւէ ատյանից ապահովագրված չեն եղել գաղտնի լինելու եւ մնալու երաշխիքով: Իշխանությունը պարտավորված չէ հարկատուների միջոցներից կարիքավորներին տրամադրված աջակցության հանգամանքներն ու մանրամասները գաղտնի պահել հանրությունից: Այդպիսով, տեղեկություն որոնող քաղաքացուց այդ տեղեկությունները գաղտնի պահելու համար տեղեկություն տնօրինող Շիրակի

մարզպետարանը, առանց դրա իրավունքն ունենալու, գոյություն չունեցող պարտավորություն է վերագրել իրեն, ինչն ինքնիրավչություն է:

Իսկապես, պետական միջոցներից կարիքավորին դրամական օգնություն հատկացնելու գործընթացը եւ այդ ընթացքում ստեղծված փաստաթղթերը կարող են քաղաքացու անձնական եւ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ պարունակել, բայց դա չի նշանակում, որ այդ տեղեկությունները անձնական եւ ընտանեկան **գաղտնիքներ** են պարունակում: Տեղեկությունները անձնական կամ ընտանեկան բնույթի գաղտնիքների շարքում դասվելու համար պիտի անհրաժեշտ որակներ ունենան: Գաղտնիության արժանիությունը պիտի սահմանվի ոչ թե տեղեկությունը հանրությանից թաքցնելու համար, այլ՝ որպես հանրությանը եւ հանրության անդամին՝ այս դեպքում քաղաքացուն չվնասելու հիմնավորում: Այս տեսանկյունից պատասխանողը պարտավոր է հիմնավորել, թե ինչով կվնասվեն ինքը՝ շահառուն, նպաստամատույցի հետ ուղղակի կապ ունեցող մարդիկ՝ նպաստամատույցին մասնակցած պաշտոնյաները, շահառու քաղաքացու մերձավորները եւ նպաստամատույցին անմիջականորեն կապ չունեցող մարդիկ՝ տեղեկություն որոնողները, եւ բոլոր հարկատուները, եթե իմ հարցրած տեղեկությունները դառնան հրապարակային, եթե ես իմանամ, որ կոնկրետ քաղաքացին պետական բյուջեի միջոցներից ստացել է որոշակի ֆինանսական միջոց, իր ընտանեկան կամ անձնական կոնկրետ կարիքները հոգալու համար, այն բանից հետո, երբ դիմել է Շիրակի մարզպետին, եւ նրա կարիքները պատշաճ ուսումնասիրվել են, եւ, երբ, այս ամբողջ գործընթացը տեղի է ունեցել օրենքով նախատեսված կարգով: Ակնհայտ է, որ որեւէ մեկը որեւէ կերպ չի վնասվելու այս հրապարակայնությունից:

Այսպիսով, իմ հարցրած տեղեկությունների տրամադրումը որեւէ կերպ չի խախտում մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը. պատասխանողից ես չեմ հարցրել տեղեկություններ որեւէ մեկի կտակի, որդեգրման, հիվանդության, իր ընտանիքի անդամների հետ անձնական բնույթի հարաբերությունների, կամ անձնական բնույթի նամակագրության կամ հեռախոսազրույցի մասին:

ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի երկրորդ կետը սահմանում է, որ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ: Այս իմաստով, եթե Շիրակի մարզպետը համարում էր, որ այդ տեղեկությունները պարունակում են տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա պարտավոր էր տեղեկություններ տրամադրել մնացած մասի վերաբերյալ, մասնավորաբար. ներկայացնել, թե յուրաքանչյուր որոշմամբ ինչքան դրամ է հատկացվել, ներկայացնել հարցված որոշումների պատճենները՝ դրանցից անջատելով կամ զատելով անձի նույնականացման հատվածները եւ այլն: Այսպիսով, անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիքի չհրապարակման պատճառաբանությամբ Շիրակի մարզպետարանը ինձ չի տրամադրել նաեւ մնացած տեղեկությունները, ինչով խախտել է իմ սահմանադրական իրավունքը: Այսով ակնհայտ է դառնում, որ Շիրակի մարզպետարանի նպատակը ոչ թե մարդու անձնական կամ ընտանեկան կյանքի՝ իր համար հասկանալի գաղտնիությունը պահպանելն է, այլ այդ պատրվակով նաեւ ընտանեկան եւ անձնական կյանքի գաղտնիության հետ ակնհայտորեն առնչություն չունեցող տեղեկությունները չտրամադրելն է:

«Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով արված ծախսերի մասին իմ մի շարք հարցերին Շիրակի մարզպետարանը նույնպես չի պատասխանել, ինչի փոխարեն նշել է, թե այդ ծախսերն արվել են պետական գնումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով, այնինչ իմ առաջին եւ երկրորդ հարցումների մեջ ես տարակուսանք կամ կասկած չեմ հայտնել այդ գործընթացների օրինականության մասին եւ չեմ կամեցել իմանալ, թե որոյո՞ք այդ գնումները օրինական են եղել: Իմ որոնած տեղեկությունները տրամադրելու փոխարեն Շիրակի մարզպետի պատասխանով բերվում են անտեղի արդարացումներ առ այն, որ ինքն օրինական է աշխատել: Այսինքն իր՝ օրինական աշխատած լինելու պնդումն արել է ապօրինի գործողությամբ. օրենքի պահանջը չկատարելով, այն է՝ սահմանված ժամկետում

հարցված եւ իր մոտ տնօրինվող տեղեկությունները ինձ չտրամադրելով: Սրանով կասկածի տակ է դնում իր իսկ հաղորդումն այն մասին, թե ծախսերն արվել են պետական գնումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդ դեպքում ի՞նչն է պատճառը, որ ինձ չեն տրամադրվել հետեւյալ տեղեկությունները. «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով Շիրակի մարզպետարանի՝ 2005, 2006, 2007, 2008 եւ 2009 թվականներին իրականացրած գնումների մանրամասները, մասնավորաբար. մատակարարները՝ ըստ ստացած գումարի եւ մատակարարած ապրանք(ներ)ի, մատակարարների ընտրության եղանակը, վճարումների եւ մատակարարումների ժամկետները:

ՀՀ Շիրակի մարզպետը, իմ հարցմանը ըստ եւրոյան չպատասխանելով եւ ինձ հետաքրքրած ու իր մոտ տնօրինվող տեղեկությունները չտրամադրելով, անգործություն է դրսեւորել եւ խախտել է ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջները: Այդպիսով, Շիրակի մարզպետը կատարել է ՀՀ Վարչական իրավախախտումների մասին օրենքի 189<sup>7</sup> հոդվածով նախատեսված զանցանք՝ տեղեկություն տալու պարտականությունը ապօրինաբար չկատարելը:

Ընդամին, իմ հարցմանը չպատասխանելով, պատասխանող կողմը խախտել է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ **տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:**

Պատասխանող կողմը, տեղեկատվության իմ հարցմանը ըստ եւրոյան չպատասխանելով, եւ իմ որոնած ու իր տնօրինման տակ գտնվող տեղեկությունները չտրամադրելով, խախտել է նաեւ ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածը, որի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց **դիմումներ** կամ առաջարկություններ **ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:**

Պատասխանող կողմը խախտել է նաեւ ՄԻ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի առաջին մասը: Նշված նորմի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, **տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝** առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից:

Ելնելով վերոգրյալից եւ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 55-րդ, 26-րդ, 59-րդ, 67-րդ եւ 72-րդ հոդվածները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189<sup>7</sup> հոդվածը,

Խնդրում եմ.

1. Ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ Շիրակի մարզպետի այն անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում չի տրամադրել հարցված տեղեկատվությունը:

Աձանցյալ պահանջներ.

2. Պարտավորեցնել ՀՀ Շիրակի մարզպետին անհապաղ պատշաճ պատասխանել իմ 2010 թվի հունվարի 18-ի թիվ 1/2010 եւ հունվարի 29-ի թիվ 2/2010 հարցումներին, եւ տրամադրել դրանցում հարցված տեղեկությունները:

3. ՀՀ Շիրակի մարզպետին ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189<sup>7</sup> հոդվածով արգելված զանցանք՝ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով նախատեսված տեղեկությունները ապօրինաբար չտրամադրելու պարտականությունները չկատարելու համար ենթարկել վարչական տուգանքի՝ 10.000 դրամի չափով:

Այս հայցին կից ներկայացվում են հետևյալ ապացուցողական նշանակությամբ փաստաթղթերի պատճենները.

1. Անձնագրի եւ սոցիալական քարտի լուսապատճենները, որոնցով՝ հաստատվում է իմ անձը:
2. ՀՀ Շիրակի մարզպետին իմ հղած 2010 թվի հունվարի 18-ի թիվ 1/2010 տեղեկատվության հարցման պատճենը եւ պատասխանողին իմ հարցումն ուղարկելու փոստային կտրոնի պատճենը, ապացուցելու համար, որ այս հարցումն իսկապես ուղարկել եմ նրան:
3. ՀՀ Շիրակի մարզպետից 2010 թվի հունվարի 27-ին ստացված հունվարի 26-ով թվագրված 01/120-10 գրությամբ պատասխանը, ապացուցելու համար, որ Շիրակի մարզպետը այդպես պատասխանել է իմ առաջին հարցմանը:
4. ՀՀ Շիրակի մարզպետին իմ հղած 2010 թվի հունվարի 29-ի թիվ 2/2010 տեղեկատվության հարցման պատճենը եւ պատասխանողին իմ հարցումն ուղարկելու փոստային կտրոնի պատճենը, ապացուցելու համար, որ այս հարցումն իսկապես ուղարկել եմ նրան:
5. ՀՀ Շիրակի մարզպետից 2010 թվի փետրվարի 10-ին նույն օրով թվագրված համար 03/307-10 պատասխանը, ապացուցելու համար, որ Շիրակի մարզպետն այդպես է պատասխանել իմ հարցմանը:
6. Պատասխանողին այս հայցն ուղարկելու մասին փոստային կտրոնի եւ ստացումը հավաստող ծանուցագրի պատճենները, ապացուցելու համար, որ այս հայցն ու հարակից փաստաթղթերը պատասխանող կողմն իսկապես ստացել է:
7. Պետական տուրքի վճարման անդորրագիրը, ապացուցելու համար, որ պետական տուրքն իսկապես վճարել եմ:
8. Այս հայցադիմումը ՀՀ Ֆինանսների նախարարությունն ուղարկելու մասին փոստային կտրոնի պատճենը, ապացուցելու համար, որ այս հայցադիմումն ուղարկվել է ՀՀ Ֆինանսների նախարարություն:

Հայցվոր՝

Լեւոն Բարսեղյան \_\_\_\_\_

12 փետրվարի, 2010թ.